

է անյայտ. ձեռքից ձեռք անցնելով հեղինակի անունը եղծուեցաւ: Ես այժմ անտեղի եմ համարում խօսել այդ մասին, միայն կը յիշեցնեմ հայկական առածը. Գողը գողից գողացաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ¹»:

Իսաֆֆիի անծանօթ էին Մխիթարեան ձեռագիրները, ուստի թերեւս ներելի համարուի իրեն այդ արհամարհական վերաբերումը:

Մեզի կը մնար սակայն քննել յարաբերութիւնը Մխիթարեան ձեռագիրներուն և Գուլամիրեանի բնագրին, հետեցնելու համար թէ արդեօք վերջինս անկախ հեղինակութիւն է, թէ՛ Մխիթարեան ձեռագիրներուն մէկին կամ միւսին օրինակը, կամ վերջապէս փոխուած ձեւը՝ միշտ նոյն աղբիւրներէն:

Դժուար չեղաւ մեզի կատարել այդ համեմատութիւնը, որուն իրբեւ արդիւնք իսկոյն պիտի ըսենք որ Մխիթարեան Բ. ձեռագիրը (անանուն հեղինակի և կատարեալ ձեւով՝ ինչպէս վերեւ կրկնեցինք) որքան կը խոտորէր իր մանրամասնութեամբ և նորանոր պարագաներով Ա. ձեռագրէն՝ իր ամբողջութեամբ, սակայն, մէն մի պարբերութեամբ և ընդհանրապէս բառառու կը զուգընթանար Գուլամիրեանի հետ: Եւ որովհետեւ ծանօթ է մեզի վերետեղոյ մէջ ներկայութիւնը Ս. Շահու-

մեանի և իր թելադրական պարագան, կասկած չի մնար որ Գուլամիրեանի ձեռագիրը Մխիթարեան Բ. ձեռագրին մէկ օրինակն է, ինչպէս կը վկայէ նաեւ իր վերտառութեան մէջ Շահումեանի անունը:

Անշուշտ դժուարութիւն չի յարուցաներ միեւնոյն իմաստով և բառերով նախադասութեանց մէջ բառերու կարգի փոփոխութիւնը՝ որուն սաէպ կը հանդիպինք Գուլամիրեանի քով: Աւելի նկատելի կէտ մըն է բառերու փոփոխութիւնը համապատասխան հոմանիշով՝ որ նոյնպէս յաճախակի կը տեսնուի: Երկու պարագաներն ալ օրինակողին քմահաճոյքին վերագրելու է. ապա թէ ոչ անհնար է մեկնել երկու անկախ տարբեր գործերու մէջ նոյնքան երկարութիւն պատմուածքի, նոյն նախադասութիւններով և նոյն կամ նոյնիմաստ բառերով:

Որքան որ Գուլամիրեան իր առջեւ ունեցած ձեռագրին վրայ զմայլած կ'ըսէ թէ «գրիչը համարեա թէ Ս. Թարգմանչաց ոսկեղենիկ դարու ճաշակն է կրում» եւն. սակայն տեղ տեղ բայերու ձեւեր ռամիկ կամ ունիթորական կերպարանք առած են հոն, ինչպէս կը տեսնուի յայտնապէս հետեւեալ օրինակներուն մէջ, ձեւեր որոնք խղճամիտ Գուլամիրեանի չեն, այլ բուն իսկ ձեռագրին՝ զոր հաւատարիմ կերպով հրատարակած է.

ՄԻԹԱՐԵԱՆ ԶԵՌ.

- էջ 3 ի բաց մերժէր
- 18 ի բաց լիցի
- 22 եհաս... հինիցն թուրքաց
- 29 գերեալս ի նոցանէ
- 35 գամենակալն Աստուած
- 39 յոյս փրկութեան
- 40 գառաջինն յարձակեցան
- 44 փախստեալքն... պաշարեալ
- 49 միւսանգամ խորտակեցաւ
- 56 ի սրտմտութիւն բարկութեան քրդեցաւ.

ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆ ՀՐՏ.

- էջ 4 ... մերժիր
- 23 ի բաց լինիցէր
- 28 Հինիցն թուրքաց հասանի
- 37 գգերեցեալսն ի նոցանէ
- 44 զԱստուածն ամենակարող
- 49 յոյս կեցութեան
- 50 առաջինն... յարձակեցան
- 57 փախստականք... պաշարեցեալ
- 63 դարձեալ խորտակիր
- 71 սկսաւ սրտմտիլ.

1. Կը համարինք թէ այստեղ աւելորդ չըլլայ յիշել, ինչպէս Բրոֆ. Ն. Արոնց ալ վերի վկայութեան հետ կը նշանակէ, թէ Կարապետ Վրդ. Շահնագարեան ալ 1840ին զրի առած է Դաւիթ բէկի պատմութիւն մը՝ պատմուած Դաւիթ բէկի մարտակից քաջերէն Պալի թոռան՝ Ստե-

փան քահանայի կողմէն, զորձ մը որ դժբախտաբար կորսուած է, և Շահնագարեան Վրդ. մեծապէս կ'ողբայ անոր վրայ, ինչպէս ծանօթ է՝ Ստեփաննոս Օրբելեանի պատմութեան յառաջարանին մէջ գրածէն, էջ 7-8 (ապ. Փարիզ 1859).